



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30656  
Յունուար 13, 1989

Մեծայարգ  
Տոքթ. Անդրանիկ Հազարեան  
Ա. Խաչ Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Նիւ Եորք.

Յարգելի Տոքթ. Հազարեան,


Ստացած ենք Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափագեանի Դեկտեմբեր 28, 1988 թուակիր ձեր նամակը, որով արտօնութիւն կը խնդրուի իրենց շրջանը աւարտած Ծխական Խորհուրդիդ անդամներէն Տիարք Նորայր Ուրեանի եւ Յակոբ Ուրեանի անունները վերստին դնել ընտրելի թեկնածուներու ցանկին վրայ:

Թեմական Խորհուրդի վերջին նիստին մէջ նկատի առնուեցաւ այս խնդրանքը, եւ որոշուեցաւ ընթացք տալ անոր:

Զեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք առաւել քաջատոյժութիւն եւ ձեր եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Սիրոյ Ռոջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ



# HOLY CROSS CHURCH OF ARMENIA

## ՍՈՒՐԲ ԽԱՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

580 WEST 187 STREET • NEW YORK, N.Y. 10033 • (212) 927-4020

28 Դեկտ. 1988

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,  
Առաջնորդ,

Սրբազան Հայր,


Յանուն նիւ Եորքի Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ ծխական խորհուրդին, կուգամ խոնարհաբար խնդրել ձեզմէ որ՝ այս տարուան ծխական խորհուրդի Անտորուծեան կատարման համար թոյլ տայիք որպէս զի 6 հոգիներու մասնակի ընտրուծեան համար 12 հոգիներու կրկնապատիկ ցանկին վրայ ունենանք հետեւեալ երկու ազգայինները՝ Պարոնայք Նորայր Ուրեան եւ Յակոբ Ուրեան՝ որոնք յօժար են վերստին իրենց թեկնածուութիւնը դնել եթէ ձեր թոյլտուութիւնը ստացուի, արուած ըլլալով որ անոնք ծառայած են ծխական խորհուրդի վրայ անընդմիջաբար, մին 3 շրջանով՝ 6 տարուան ծառայութեամբ, իսկ միւսն ալ 4 շրջանով՝ 8 տարուան ծառայութեամբ, երկուքն ալ ներկայ տարեշրջանին փակումով: Աւելորդ է ըսել որ այս վերջնոյս համար անցեալին ձեր թոյլտուութիւնը ստացուած է:

Ինչպէս վերեւ ըսինք, Նորայր Ուրեան ներկայ տարեշրջանի փակումով ծառայած պիտի ըլլայ 3 շրջան, 1983 Փետր. - 85 փետր., 1985 փետր. - 87 Փետր., 1987 Փետր. - 89 Փետր.: իսկ Յակոբ Ուրեանի պաշտօնավարութեան շրջանն է՝ 1981 Փետր. - 83, 1983 Փետր. - 85, 1985 Փետր. - 87 եւ 1987 Փետր. - 89 Փետր., եւ ինչպէս յիշեցինք վերեւ այս վերջին Չորրորդ շրջանին համար ձեր արտօնութիւնը ստացուած է:

Արդ կը խնդրենք ձեզմէ որ վերոյիշեալներուն համար յաւելեալ շրջանի ծառայութեան համար երկարաձգում շնորհէք, որքան կարելի է շուտով, որպէս զի մենք կարենանք անոնց թեկնածուութիւնը ապահովել մեր յառաջիկայ տարեկան ընտրութեանց համար որ հանդերձեալ է կատարուիլ Յունուար 22, 1989-ին:

Սրբազան Հայր կը խնդրենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք մեր ծխական համայնքի մասնաւոր պարագան եւ քարեհամից այս արտօնութիւնը շնորհել, որպէս զի մենք ալ մեր կարգին բաւարար ժամանակ ունենանք ժողովուրդին ղրկելու մեր 12 հոգինոց երկպատիկ ցանկը ծխական խորհուրդի ընտրութեան համար:

Կնպաստենք մեծ յոյսով ձեր դրական պատասխանին մօտիկ ապագային:

Մնամք խոնարհ Աղօթակից,  
  
 Տ. Տիրան Ա. Քինյ. Փափագեան  
 Հովիւ եւ նախագահ ծխական խորհուրդոյ

Ապրիլ 16, 1987

Արժանաշնորհ  
Տ. Բլուրնդ Ա. ՔՆՆյ. Գալֆայան  
Հովիւ Ա. Մաչ Սկեղեցւոյ  
Նիւ Եորք.

Արժանաշնորհ Տէր Հայր,

Ստացած եմ Ապրիլ 8, 1987 թուակիր ձեր հրաւեր-նամակը:

Իմ շնորհակալութիւնը կը յայտնեմ ի պատիւ Տիար Աճմ Չափուրեան ար-  
ւելիք մեծարանքի հանդիսութեան ինծի եղած հրաւերի՞նչ համար:

Կը ցաւիմ որ պիտի չկարենամ ներկայ գտնուիլ, քանի որ ամէն շաբաթ  
որ յետ միջօրէին ելաբերն կը մեկնիմ որպէս այցելու հովիւ:

Յաջողութեան լաւագոյն մտղթանքներով՝

Աղօթակից

Հայկազուն Ծ. Կրդ. Նամարեան  
Առժամուայ Առաջնորդի-Յոխանորդ

Ապրիլ 16, 1987

Արժանաշնորհ  
Տ. Քիւրեղ Ա. ՔՆՆ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Իսաչ Սկեղեցւոյ  
Նիւ Եորք.

Արժանաշնորհ Տէր Հայր,

Ստացած եմ Ապրիլ 8, 1987 թուակիր ձեր հրաւեր-նամակը:


Իմ շնորհակալութիւնը կը յայտնեմ ի պատիւ Տիրաւ Սէմ Զափուլեան տըր-  
ւելիք մեծարանքի հանդիսութեան ինծի եղած հրաւերի՞նչ համար:

Կը ցաւիմ որ պիտի չկարենամ ներկայ գտնուիլ, քանի որ ամէն շաբաթ  
որ յետ միջօրէին էլ պըրոն կը մեկնիմ որպէս այցելու հովիւ:

Յաջողութեան լաւագոյն մտղթանքներով՝

Աղօթակից

Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան  
Առժամեայ Առաջնորդի-Փոխանորդ



# HOLY CROSS CHURCH OF ARMENIA

## ՍՈՒՐԲ ԽԱՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

580 WEST 187 STREET • NEW YORK, N.Y. 10033 • (212) 927-4020

18 Ապրիլ 1987

Հոգ. Յ. Հայկազուն Ս. Վրգ. Նահաբեան

Առժամայ Առաջնորդի Փոխանորդ

Նիւ Եորք, Նիւ Եորք

Սիրելի Տէր Եղբայր ի Բրիտանոս,

Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Միական Խորհուրդը մեծ հանդիսութեամբ պիտի պատուէ եկեղեցւոյս նախկին Ատենապետ, Թեմական Պատգամաւոր եւ Աւանդապահ Մարմնի անդամ Մեծայարգ Տիար Սէմ Զարութեանը: Այս հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ 16 Մայիս 1987, շաբաթ երեկոյեան ժամը 7.00ին եկեղեցւոյս Բէշէնեան Սրահին մէջ:

Ուրախութեամբ եւ սիրով կը հրաւիրենք ձեր Եղբայրութիւնը սոյն հանդիսութեան եւ ճաշկերոյթին:

Կանխայայտ շնորհակալութիւններով եւ խոնարհաբար կ'սպասենք Ձեր պատասխանին մինչեւ 1 Մայիս 1987:

Մամ Չերմ սիրոյ ոգիւնիւ

Աղօթակից

*Կիրտչ Ն. Փիւլյ. Գալայիան*

Կիւրեղ Ա. Բհնյ. Գալմայեան

Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ

Նիւ Եորք, Նիւ Եորք